## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
## « ՆՊ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ-19/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Ք.Երևան 06 հունիսի 2019թ.
Ժամը՝ 14:00

Մասնակցում էին[a]
Հանձնաժողովի նախագահ՝ Ռ.Գալստյան
Հանձնաժողովի անդամներ Ս. Սիմոնյան
Ռ.Աբգարյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ք.Հայրապետյան

### 1. Հանձնաժողովի նիստի օրակարգը
**(Ռ.Գալստյան)**

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.
1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկությունների գնահատման մասին
3. Մերժված հայտի մասին:
4. Պայմանագիր կնքելու որոշման մասին
5. Չկայացած չափաբաժինները հաստատելու մասին
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 դեմ՝0***

### 2.ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկություններիգնահատման մասին
**(Ռ.Գալստյան)**

Ընդունել ի գիտություն, որ 05.06.2019թ-ին ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության առաջին տեղը զբաղեցրած մասնակիցները ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, բացառությամբ Անդրանիկ Գասպարյան ԱՁ-ի, որը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 7000 ՀՀ դրամի չափով, ինչը գերազանցում է Հրավերի 2-րդ մասի 2.1 կետի 2-րդ ենթակետով սահմանված ժամկետանց պարտավորությունների չափը:

**«ՆՊ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ-19/8»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից սահմանված ժամկետում հանձնաժողովին են ներկայացվել սույն ընթացակարգին հրավերի II մասի՝ հայտը պատրաստելու հրահանգով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Համաձայն ներկայացված փաստաթղթերի՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով սահմանված ժամկտում հանձնաժողովին ներկայացված սույն ընթացակարգին հրավերի II մասի՝ հայտը պատրաստելու հրահանգով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները), համապատասխանում են սույն ընթացակարգի հրավերով և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին, ուստի հանձնաժողովը որոշեց.

| Հ/Հ | Մասնակիցը | Չափաբաժինը |
|---|---|---|
| | ***Ընտրված մասնակից ճանաչել՝*** | |
| 1 | Արֆարմացիա ՓԲԸ | 6,15,22 |

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝0***

### 3. Մերժված հայտի մասին
**(Ռ.Գալստյան)**

Հիմք ընդունելով 04 մայիսի 2017թ.-ի 526-Ն Որոշման կարգի 44-րդ կետը, Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ

տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել Անդրանիկ Գասպարյան Ա Ձ -ի հայտը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: 04 մայիսի 2017թ.-ի 526 Ն Որոշման կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

***Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:***

**4.Պայմանագիր կնքելու որոշման մասին**
**(Ռ.Գալստյան)**

Բացառությամբ՝ 1-4,7,9,10,11,14-16,17,18,19,21,23,24,29,30,31,32,33,37,38,39,40,42-48,51-53,56,57,60-65 չափաբաժինների՝ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակել տեղեկագրում և անգործության ժամկետ սահմանել հրապարակման հաջորդող օրվանից հաշված 5-րդ օրացուցային օրը ներառյալ:

***Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:***

**5.Չկայացած չափաբաժինները հաստատելու մասին**
**(Ռ.Գալստյան)**

Գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն 1-4,7,9,10,11,14,16,17,18,19,21,23,24,29,30,31,32,33,37,38,39,40,42-48,51-53,56,57,60-65-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած՝ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին:

***Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:***

**6.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**
**(Ռ.Գալստյան)**

« ՆՊ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ-19/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում ք.Երևան, Նուբարաշեն Չնքուշի 4 հասցեում:

***Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:***

Հանձնաժողովի նախագահ՝ Ռ.Գասլտյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ս.Սիմոնյան

Ռ.Արգարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Բ.Հայրապետյան

ProTender©
www.protender.am